ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իրավագիտության մագիստրոսի գիտական աստիճան

Տեղեկատվական հանդիպում հուլիսի 15-ին

Փաստաթղթերի ընդունման նոր վերջնաժամկետ՝ հուլիսի 22

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) շարունակում է միջազգային և համեմատական իրավունքի մագիստրոսի գիտական աստիճան շնորհող երկամյա նոր ծրագրի համար փաստաթղթերի ընդունումը:

"Միջազգային և համեմատական իրավունք" ծրագրի հիմնական նպատակն է հնարավորություն տալ ուսանողին օժանդակել Հայաստանի ա)զարգացող շուկայական տնտեսության և բ)քաղաքականության մշակման և օրենսդրական գործընթացների իրավական հիմքերի ստեղծմանը:

Ծրագիրը համեմատական սկզբունքով կուսումնասիրի եվրոպական քաղաքացիական իրավունքի և անգլո-ամերիկյան իրավունքի համակարգերի իրավական ավանդույթները և կունենա երկու ուղղվածություն: **Միջազգային գործարարության իրավունքի** շրջանակներում կուսումնասիրվեն շուկայական տնտեսության, միջազգային հանրային իրավունքի և միջազգային գործարքների հիմնական դրույթները, պայմանագրային հարաբերությունները, միջազգային ապրանքային առևտուրը, միջազգային ֆինանսական իրավունքը և վեճերի լուծման մեթոդները: **Համեմատական սահմանադրական իրավունքի** առարկաները կընդգրկեն սահմանադրականության, իրավական կանոնակարգման, օրենսդրական նախագծման, հասարակության և անհատի իրավունքների հիմնահարցերը, ինչպես նաև միջազգային համաձայնագրերին և պայմանագրերին վերաբերող խնդիրների ուսումնասիրությունը:

<u>1996թ. հուլիսի 15-ին</u> ժամը 17:00-ից 19:00-ը Հայաստանի ամերիկյան համալսարանում կարևոր հանդիպում կանցկացվի դիմորդների հետ՝ միջազգային և համեմատական իրավունքի ուսումնական ծրագրի և ապագա շրջանավարտների համար դրա մասնագիտական արժեքի քննարկման նպատակով:

Դիմորդները պետք է ներկայացնեն՝ դիպլոմ և ներդիր՝ իրենց պատճեններով, երեք երաշխավորագիր-նամակ, լրացնեն դիմում և ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Դիմորդները պետք է ունենան <u>իրավաբանական բարձրագույն կրթություն</u> և <u>անգլերեն լեզվի մասնակի իմացություն:</u>

Փաստաթղթերի ընդունման կանխավճարը կազմում է ԱՄՆ 10 դոլարին համարժեք դրամ, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: **<u>1996թ. հուլիսի 22-ը</u>** փաստաթղթերի ընդունման նոր վերջնաժամկետն է:

Բոլոր դիմորդները **<u>1996թ. հուլիսի 24-ին</u>** կհանձնեն անգլերեն լեզվի իմացությունը գնահատող քննություն (բացառությամբ այն դիմորդների, ովքեր վերջերս TOEFL քննությունից ստացել են 550 և ավելի միավոր): Առաջին փուլով անցած այն դիմորդները, որոնք չեն բավարարի անգլերեն լեզվի իմացության պահանջված մակարդակը, կմասնակցեն 1996թ. սեպտեմբերից մինչև 1997թ. փետրվարի վերջը ՀԱՀ-ում անցկացվող անգլերեն լեզվի արագացված ծրագրին: Անգլերեն լեզվի արագացված ծրագրի ուսման վարձը կազմում է ԱՄՆ 180 դոլարին համարժեք դրամ: Նախքան ծրագիր ընդունվելը՝ 1996 թ. օգոստոսի սկզբին, որոշ դիմորդների հետ հարցազրույցներ կանցկացվեն: Դիմորդների անուններն ու հարցազրույցների ամսաթվերը կփակցվեն անգլերեն լեզվի քննությունից հետո:

Դասընթացները կանցկացվեն օրվա երկրորդ կեսին՝ ուսանողներին նաև աշխատելու հնարավորություն տալու համար:

Հիմնական ծրագրում վերջնական ընդունելությունը կկատարվի դիպլոմի ներդիրի միջին ցուցանիշի, նախապատրաստական փուլում դիմորդների ցուցաբերած առաջադիմության և LSAT կամ GRE քննության արդյունքների հիման վրա: Հիմնական ծրագիրը կսկսվի 1997 թ. մարտին՝ անգլերեն լեզվի արագացված ծրագրի ավարտից անմիջապես հետո:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ: Հասցե՝ Երևան, Մարշալ Բաղրամյան 40, առաջին հարկ, 19 սենյակ, հեռախոսներ՝ **58-81-15, 27-16-29**:

Հիմնական ծրագիր ընդունված բոլոր ուսանողները պետք է ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ ստորագրեն ավարտելուց հետո երեք տարի Հայաստանում մնալու և աշխատելու պայմանագիր: ՀԱՀ-ը բացառում է ռասայական, կրոնական, սեռային կամ ազգային խտրակատությունը